ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

**ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի կողմից բյուջետային միջոցների օգտագործման, բյուջեի մուտքերի ապահովման, ինչպես նաև համայնքային սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ**

## ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Վերահսկողության հիմքը՝** ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2016 թվականի մարտի 2-ի թիվ 7/2 որոշումը:

**Վերահսկողության նպատակը՝** ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի կողմից բյուջետային միջոցների օգտագործման, բյուջեի մուտքերի ապահովման, ինչպես նաև համայնքային սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացում:

**Վերահսկողության առարկան՝** իրականացնել վերահսկողություն՝ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի կողմից բյուջետային միջոցների օգտագործման, բյուջեի մուտքերի ապահովման, ինչպես նաև համայնքային սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ:

**Վերահսկողության օբյեկտը՝** ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքը, ներառյալ ենթակա հիմնարկները, համայնքային ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները և կանոնադրական կապիտալում 50 և ավելի տոկոս համայնքային մասնակցությամբ իրավաբանական անձինք:

**<u>Վերահսկողության իրականացման ժամկետը</u>՝** 2016 թվականի մարտի 3-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ը:

**<u>Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանը</u>՝** 2015 թվականի հունվարի 1-ից մինչև ստուգման իրականացման ժամկետի ավարտը:

**<u>Վերահսկողության մեթոդաբանությունը</u>՝** Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերով: Վերահսկողության ընթացքում կիրառվել են համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության (կատարողական) վերահսկողության տեսակները:

**<u>Վերահսկողության ծավալը</u>՝** համայնքի 2015թ. բյուջեով եկամուտներ է նախատեսվել 342,929.3 հազ. դրամ, փաստացին կազմել է 351,786.1 հազ.դրամ: 2015թ. բյուջեով ծախսեր է նախատեսվել 345,361.2 հազ.դրամ, իսկ փաստացին կազմել է 333,990.1 հազ.դրամ: Ստուգմամբ ընտրանքային կարգով ընդգրկվել են հետևյալ եկամտատեսակները և ծախսային հոդվածները՝

- Հողի հարկ
- Գույքահարկ
- Տեղական տուրքեր և վճարներ
- Հողի և գույքի վարձավճարներ
- Կոմունալ ծառայություններ:

***<u>Վերահսկողության արդյունքները</u>՝***

**Համայնքի բյուջեի ընդհանուր նկարագիրը**

Ստեփանավանի քաղաքային համայնքի 2015-2016թթ. բյուջեները համայնքի ավագանու համապատասխանաբար 23.01.2015թ 02-ն, 07.04.2015թ 07-ն, 12.06.2015թ 12-ն, 26.10.2015թ 25-ն, 16.12.2015թ 38-ն և 25.01.2016թ 01-ն որոշումներով հաստատված և ֆինանսական տարվա ընթացքում կատարված փոփոխություններից հետո եկամուտները և ծախսերը կազմում են.

**հազ. դրամ**

| | 2015թ | | | 2016թ 1-ին եռամսյակ | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Եկամուտներ և ծախսեր** | **Տարեկան ճշտված պլան** | **Փաստացի** | **Կատարողական** | **Տարեկան ճշտված պլան** | **Փաստացի** | **Կատարողական** |
| **Եկամուտներ** | **342,929.3** | **351,786.1** | **102.6%** | **385,749.5** | **80,989.0** | **21.0%** |
| **Ծախսեր** | **345,361.2** | **333,990.1** | **95.8%** | **390,154.7** | **72,189.2** | **18.5%** |

**Հողի հարկ և գույքահարկ**

Համաձայն քաղաքապետարանի պատասխանատու ստորաբաժանման տրամադրված տեղեկանքի՝ համայնքի հողի հարկի և գույքահարկի հավաքագրումները 2015թ. փաստացին կազմել է հողի հարկի մասով՝ 11,530.9 հազ. դրամ, գույքահարկի մասով՝ 39,069.1 հազ. դրամ: 01.04.2016թ. դրությամբ հողի հարկի փաստացին կազմել է 3,594.6 հազ. դրամ, իսկ գույքահարկի մասով՝ 8,794.9 հազ. դրամ:

Ստուգմամբ պարզվեց, որ 01.01.2016թ. դրությամբ հողի հարկի և գույքահարկի վճարումները չկատարած և ապառքներ կամ տույժերի հետ միասին համայնքի բյուջե չվճարված գումարները կազմում են 23,842.0 հազ. դրամ, որից 12,776.6 հազ. դրամ որպես հողի հարկի ապառք, իսկ 11,065.4 հազ. դրամը որպես գույքահարկի ապառք, նույն թվում անշարժ գույքի մասով 1,715.4 հազ. դրամ և 9,350.0 հազ. դրամը փոխադրամիջոցների մասով ապառք: 2015թ-ի գործունեությունից նոր ապառք չի առաջացել:

## Տեղական տուրքեր և վճարներ

Հաշվի առնելով համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական տուրքերի դրույքաչափերը և ''Տեղական տուրքերի և վճարների մասին'' ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջը այն է՝ ''Տեղական տուրք և (կամ) վճար գանձող մարմինների պաշտոնատար անձինք տեղական տուրքի կամ վճարի հաշվարկն իրականացնում և տեղական տուրքը կամ վճարը գանձում են նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը՝ ելնելով սույն օրենքին համապատասխան սահմանված տեղական տուրքի կամ վճարի դրույքաչափերից'', ստուգող հանձնաժողովի պահանջով կատարվեց տեղական տուրք վճարողների գույքագրում և հաշվառում:

Ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվությունների մասով ստուգմամբ ընդգրկող ժամանակահատվածում ստեղծված գույքագրման հանձնաժողովը արձանագրեց՝ համայնքում առկա է 58 խմիչք-ծխախոտ, 9 խմիչք և 3 ծխախոտի վաճառքի կետ: 2015թ. նախատեսվել է հավաքագրել 2,040.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել՝ 1,942.0 հազ. դրամ: 2016թ. ծխախոտի և ոգելից խմիչքի տեղական տուրքերից հավաքագրումը նախատեսվել է 2,444.0 հազ. դրամ: 2016թ. մարտի 24-ի դրությամբ համայնքի բյուջե մուտքագրվել է առաջին եռամսյակի թույլտվության համար՝ 728.0 հազ. դրամ:

Համայնքի 2014թ. թիվ 45-Ա և 2015թ. թիվ 41-Ն ավագանու որոշումներով հաստատված 2015-2016թթ. Տեղական տուրքերի և վճարների համար սահմանված դրույքաչափերի համաձայն վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային

գազերի վաճառքի թույլտվության գումարը կազմում է տարեկան 150.0 հազ. դրամ: Քաղաքապետարանի հանձնաժողովի գույքագրման ակտի համաձայն համայնքում առկա է նմանատիպ 6 վաճառքի կետ, 31.12.2015թ. թույլտվության վճարները ամբողջությամբ վճարված են: 2016թ. վաճառքի թույլտվության վճար գանձվել է 505.0 հազ. դրամ, կամ պակաս է գանձվել 395.0 հազ. դրամ, որը ենթակա է գանձնման համայնքի բյուջե:

Համայնքի ավագանու որոշումով հաստատված 2015թ. տեղական տուրքերի և վճարների համար սահմանված դրույքաչափերի տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության գումարը կազմում է տարեկան 30.0 հազ. դրամ, իսկ հանրային սննդի կազմակերպման վաճառքի թույլտվության գումարը կազմում է ոչ հիմնական շինություններում տարեկան 4.0 հազ. դրամ, հիմնական շինություններում՝ տարեկան 12.0 հազ. դրամ: Համաձայն համայնքի գույքագրման ակտի համայնքում առկա է տեխնիկական հեղուկների վաճառքի 10 կետ, իսկ հանրային սննդի կազմակերպման վաճառքի 4 կետ: 2015թ. թույլտվության վճարները ամբողջությամբ վճարված են:

Համայնքի ավագանու որոշումով՝ տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության գումարը կազմում է տարեկան 45.0 հազ.դրամ: Քաղաքապետարանի հանձնաժողովի գույքագրման ակտի համաձայն համայնքում առկա է նմանատիպ 8 վաճառքի կետ: 2016թ. վաճառքի թույլտվության վճար գանձվել է 155.0 հազ. դրամ, կամ պակաս է գանձվել 205.0 հազ. դրամ:

Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու համար 2015թ. նախատեսված է եղել հավաքագրել է 2,140.0հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 2,011.5 հազ. դրամ, կամ պակաս է գանձվել 128.5 հազ. դրամ:

Քաղաքապետարանի հանձնաժողովի գույքագրման ակտի համաձայն համայնքում առկա է հիմնական և ոչ հիմնական 5 վաճառքի կետ, որոնց ընդհանուր գանձվելիք գումարը կազմում է 52.0հազ. դրամ: 2016թ. վաճառքի թույլտվության վճար գանձվել է 25.0 հազ. դրամ, կամ պակաս է գանձվել 27.0 հազ. դրամ, որը ենթակա է գանձման համայնքի բյուջե:

Համայնքում ոսկյա զարդերի վաճառքի թույլտվության գումարը կազմում է տարեկան 50.0հազ.դրամ: Քաղաքապետարանի հանձնաժողովի գույքագրման ակտի համաձայն համայնքում առկա է նմանատիպ 2 վաճառքի կետ, 2015թ. թույլտվության վճարները ամբողջությամբ վճարված են: 2016թ. քաղաքապետարանի հանձնաժողովի գույքագրման ակտի համաձայն համայնքում առկա է նմանատիպ 2 վաճառքի կետ, 2016թ. վաճառքի թույլտվության վճար գանձվել է 25.0 հազ. դրամ, կամ պակաս է գանձվել 75.0 հազ. դրամ, որը ենթակա է գանձման համայնքի բյուջե:

**Այսպիսով 2016թ. 1-ին եռամսյակի ընթացքում համայնքի բյուջե տեղական տուրքերի մասով պակաս է գանձվել 928.5հազ. դրամ, որը ենթակա է գանձման համայնքի բյուջե:**

Քաղաքապետարանի կողմից խախտվել է <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը, այն է <<Տեղական տուրքը կամ վճարը գանձվում են նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը..>> , ինչպես նաև նույն օրենքի 20-րդ հոդվածի 1 և 2-րդ կետերը:

**Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վարձակալության վերաբերյալ**

2015-2016թթ. համայնքի սեփականություն հանդիսացող շենք-շինություններից վարձակալությամբ է տրվել 148.5 քմ տարածք և 70 հատ հենասյուներ ընդհանուր՝ 3,137.5 հազ. դրամ վարձավճարով, որից՝ 83.88 քմ վարձակալական պայմանագրով մինչև 25.12.2017թ. տրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցեի նախարարության Ստեփանավանի տարածքային ստորաբաժանմանը՝ 1,620.0 հազ. դրամ տարեկան վարձավճարով: Նշված գումարը 01.01.2016թ. դրությամբ վճարվել է ամբողջությամբ.

1. 26.8 քմ վարձակալական պայմանագրով մինչև 31.12.2017թ. տրվել է Ազգային վիճ. ծառայությանը 514.6 հազ.դրամ տարեկան վարձավճարով: Նշված գումարը 01.01.2016թ. դրությամբ վճարվել է ամբողջությամբ.

2. 70 հատ հենասյուներ վարձակալական պայմանագրով մինչև 31.12.2015թ. տրվել է ՋԻԵՆՍԻ ԱԼՖԱ ՓԲԸ-ին 420.0 հազ. դրամ տարեկան վարձավճարով, 01.01.2016թ. դրությամբ վճարվել է ամբողջությամբ և պայմանագրի 9.1 և 9.2 կետերի համաձայն երկարաձգվել է մինչև 31.12.2020թ.-ը.
3. 19 քմ վարձակալական պայմանագրով մինչև 25.12.2015թ. տրվել է ՀՀ արդարադատության նախարարությանը 222.0 հազ. դրամ տարեկան վարձավճարով. 01.01.2016թ. դրությամբ վճարվել է ամբողջությամբ.
4. 18.8 քմ վարձակալական պայմանագրով մինչև 10.01.2015թ. տրվել է կրթության գիտության աշխատողների արհմիությանը 360.9հազ.դրամ տարեկան վարձավճարով 01.01.2016թ. դրությամբ վճարվել է ամբողջությամբ.

2015 թվականի ընթացքում համայնքի բյուջե է մուտքագրվել 3,137.5 հազ. դրամ: 2016թ.-ի ընթացքում վարձակալությամբ տրված տարածքների տարեկան գումարը կազմում է 3,328.6 հազ. դրամ: 01.04.2016թ-ի դրությամբ համայնքի բյուջե է մուտքագրվել 824.2 հազ. դրամ:

**Ստեփանավան համայնքի հողային ֆոնդի վերաբերյալ**

Ստեփանավան համայնքի վարչական տարածքը կազմում է 5 333.56 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր 3 445.14 հա, բնակավայրի հողեր 629.71 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողեր 196.33 հա, էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր 48.24 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր 146.23 հա, հատուկ նշանակության հողեր 113.83 հա, անտառային հողեր 309.44 հա, ջրային հողեր 444.64 հա:
Համայնքային սեփականության հողերը կազմում են ընդամենը 2,906.34 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր 2 396.87 հա, այդ թվում վարելահող 179.06 հա, խոտհարք 576.75 հա, արոտ 1 478.30 հա, այլ հողատեսքեր 162.75 հա, բնակավայրի հողեր 332.7 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների

հողեր 113.55 հա, էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր 28.76 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր 19.24 հա, ջրային հողեր 15.23 հա:

Գյուղատնտեսական նշանակության հողերից վարձակալության է տրվել ընդամենը 350.41 հա, որից վարելահող 30.27 հա, խոտհարք 104.67 հա, արոտ 192.56 հա, այլ հողատեսքեր 22.9 հա: Վարձակալությամբ տրամադրված հողերի տարեկան վարձավճարը կազմում է 3,382.9 հազ.դրամ:

**30.03.16թ-ի դրությամբ հողի վարձավճարների գծով ապառքը կազմում է 512.1հազ. դրամ և տույժը 108.8 հազ. դրամ, ընդամենը ենթակա է վճարման 620.9 հազ. դրամ:**

## Աղբահանության վարձավճարների վերաբերյալ

Համայնքում աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար 2015թ-ի բյուջեով աղբահանության վճար է նախատեսվել 13,000.0 հազ. դրամ, ճշտված բյուջեով այն կազմել է 13,000.0 հազ. դրամ, փաստացի համայնքի բյուջե մուտքագրվել է 12,499.9 հազ. դրամ:

Քաղաքապետարանի ֆինանսների և եկամուտների հաշվառման ու հավաքագրման բաժնի կողմից ստուգմանը ներկայացված համայնքի 2015թ. բյուջեի եկամտային մասի վերաբերյալ, վերլուծությունների, առաջարկությունների և հիմնավորումների համաձայն Ստեփանավան համայնքի տարածքում հաշվառվել է շուրջ 17.0 հազ. բնակիչ: Բաժնի կողմից կատարվել է վերլուծություն և որոշվել է, որ համայնքում մշտական բնակվում են և աղբահանության ծառայություններից օգտվել են շուրջ 9.5-10.0 հազ. բնակիչ, որոնց աղբահանության վարձավճարի գումարը կազմել է 9,475.9 հազ. դրամ: Բացի բնակչությունից համայնքում հաշվառվել է նաև 178 հասարակական սպասարկման գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտներ, որոնց աղբահանության վարձավճարը կազմել է 3,024.0հազ.դրամ: Ընդամենը աղբահանության վարձավճարները

կազմել են 12,499.9 հազ. դրամ: Աղբահանության վճարների գանձման աշխատանքները <<Ստեփանավանի կոմունալ տնտեսություն>> ԲԲԸ-ից քաղաքապետարանին է փոխանցվել 2015թ-ի հունվարի 1-ից: 01.01.2016թ-ի դրությամբ ֆիզիկական անձանց /բնակչության/ կենցաղային աղբահանության գծով պարտքը կազմել է ***2,172.5*** հազ. դրամ, որը 01.01.2015թ-ի դրությամբ կազմել էր ***1,170.4*** հազ. դրամ կամ 2015թ-ի գործունեության ընթացքում գոյացել է նոր ապառքներ, գումարով ***1,002.1*** հազ. դրամ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի հողօգտագործողների կողմից 30.03.2016թ. դրությամբ հողի վարձավճարների գծով ապառքը կազմում է 512.1 հազ. դրամ, իսկ տույժը՝ 108.8 հազ. դրամ, ընդամենը 621.0 հազ. դրամ և ենթակա է վճարման համայնքի բյուջե:

2. Խախտելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջները համայնքում չի գանձվել 928.5 հազ. դրամ տեղական տուրք:

3. Չնայած 2015թ. գործունեությունից գույքահարկի և հողի հարկի մասով նոր ապառքներ չեն առաջացել, սակայն առկա են նախորդ տարիների 12,776.6 հազ. դրամ հողի հարկի և 11,065.4 հազ. դրամ գույքահարկի ապառք:

4. Համայնքում ավագանու որոշմամբ հաստատված դրույքաչափերի համաձայն աղբահանության վարձավճարները 2015թ. համար պակաս են հավաքագրվել համայնքային բյուջե 1,002.1 հազ. դրամի չափով:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Ստեփանավանի քաղաքապետարանին**

1. ''Տեղական տուրքերի և վճարների մասին'' ՀՀ օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան միջոցներ ձեռնարկել տեղական տուրքերը ժամանակին գանձելու և համայնքի բյուջե մուտքագրելու ուղղությամբ:

2. Աղբահանության վարձավճարների գանձումների նկատմամբ իրականացնել պատշաճ հսկողություն՝ գանձումներն իրականացնելով ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

3. Հողի վարձակալության վարձավճարների ապառքները, ինչպես նաև պայմանագրերով սահմանված տույժերը գանձել համայնքի բյուջե:

4. Գործող օրենքին համապատասխան միջոցներ ձեռնարկել հողի հարկի և գույքահարկի ապառքները համայնքի բյուջե մուտքագրելու ուղղությամբ:

5. «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ) ենթակետի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին տրամադրել գրավոր տեղեկատվություն՝ ընթացիկ հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների մասին: